

Ինչ հաճախականությամբ է խմելու ջուր ջրամատակարարվում Ստեփանակերտ քաղաքի սպառողներին «Զրնուղ-կոյուղի» ՓԲԸ կողմից

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 8-ի N 39Ն որոշման համաձայն «Զրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը իր կողմից հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի համաձայն պարտավոր է Ստեփանակերտ քաղաքի սպառողներին ապահովել շուրջօրյա ջրամատակարարմամբ, բացառությամբ Աջափնյակ թաղամասի 7-րդ զուգահեռի սպառողների, որոնց ջրամատակարարումը կիրականացվի ժամը 18:00-20:00-ն ընկած ժամանակահատվածում: